Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

363
Ա-62

ԱՆՑԵԼՈՎԻՉ
Ա.

# ՄՈՊՐ-Ը ՅԵՎ ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

13 FEB 2013
363
Ա-62
1 MAR 2010

# Մ Ո Պ Ր - Ը

## ՑԵՎ, ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1007
29983

(ՀԱՄԿԽ-Ի ՔԱՐՏՈՒՂԱՐ ԸՆԿ. ԱՆՑԵԼՈՎԻՉԻ ՃԱՌԸ
ՄՈՊՐ-Ի 3-ՐԴ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ)

ՊԵՏՀՐԱՏ 1932 ԵՐԵՎԱՆ

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
Գլավլիտ 6985 (բ)
Հրատար. 1924
Պատվեր 6138
Տիրաժ 3000

Խմբագրեց Ս. Սառուխանյան ՍՏ. Ֆ. Ե.

# ՀԱՄԿԽ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՄՕՊՐ-Ի ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ բանվոր դասակարգի վճռական հաջողությունները սոցիալիստական շինարարության հնգամյա պլանի իրագործման ասպարեզում, ուժեղացնում են իմպերիալիստական յերկրների ատելությունն ու վայրույթը հանդեպ սոցիալիզմ կառուցող յերկրի: Միջազգային բուրժուազիան տենդային պատրաստություն ե տեսնում զինված ինտերվենցիա սկսելու Խորհրդային Միության դեմ, վորը սոցիալիստական ինդուստրիայի բուռն աճումն ու գործազրկության վերացումը հակադրում ե կապիտալիստական յերկրների խոր տնտեսական ճգնաժամին և մասսայական գործազրկության:

Շահագործման կապիտալիստական սիստեմի դեմ պայքարող և Խ. Միության պաշտպանության համար հանդես յեկող բանվորներին բուրժուական արդարադատությունը բանտ ե նետում և աքսոր ե ուղարկում: Սոցիալ-ֆաշիստների որհնությամբ և անմիջական աջակցությամբ վոստիկանությունը կրակ ե բաց անում բանվորների ու գործազուրկների ցույցերի վրա:

Ֆաշիստական տերրորը նախճիրներ ե գործում կապիտալի յերկրներում, ամեն որ ավելացնելով նորանոր զոհեր պրոլետարական հեղափոխության համար պայքարող մարտիկներից:

ԽՍՀՄ-ի սոցիալիզմի կառուցման հնգամյա պլանի 3-րդ վճռական տարին թեվակոխելու և կարմիր գծից դուրս դասակարգային պայքարի սրման պայմաններում, ՄՈՊՐ-ի աշխատանքն ստանում ե բացառիկ ինտերնացիոնալ նշանակություն:

1. ՀԱՄԿԽ-ի նախագահությունը նշում ե, վոր ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ն ունի մի շարք նվաճումներ բանվոր-

ների և աշխատավորական լայն խմբերի ինտերնացիոնալ դաստիարակության, ինչպես նաև կապիտալիստական յերկրների հեղափոխական մարտիկներին և ֆաշիստական տեռորից զոհվածներին օգնություն կազմակերպելու գործում:

2. Պրոֆմիութենական կազմակերպությունները ՄՕՊՐ-ի բջիջների և կոմիտեների հետ միասին, շնորհիվ աշխատանքի ճիշտ դրվածքի, ձեռք են բերել մի շարք ձեռնարկներում (Թարխովի էլեկտրոգործարան, Ցեկատերինովի յերկաթուղու վագոնների և շոգեկառքերի նորոգման գործարանները, Դնեպրոստրոյ, «Պրոլետարի» գործարան և այլն) դրական արդյունքները մոպրական կազմակերպությունների վերակառուցման գործում: Այդ նվաճումները ձեռք են բերված շնորհիվ այն հանգամանքի, որ ինտերնացիոնալ դաստիարակչական աշխատանքը շաղկապվել է արդֆինպլանների կատարման համար տարվող պայքարին, լոզունգ ունենալով— ՄՕՊՐ-ի յուրաքանչյուր անդամ հարվածային է, յուրաքանչյուր հարվածային ՄՕՊՐ-ի անդամ է: Կազմակերպվում է ՄՕՊՐ-ի անվան հարվածային բրիգադներ, ինտերնացիոնալ յերեկույթներ, կապիտալիստական յերկրների հեղափոխական շարժումն ուսումնասիրող խմբակներ, վերցվում է կապիտալիստական յերկրների բանտերում գտնվող քաղբանտարկյալների շեֆությունը, տարվում է գրագրություն բանտարկյալների հետ և այլն:

3. Սրա հետ միասին ՀԱՄԿԽ-ի նախագահությունն արձանագրում է, որ շատ ձեռնարկներում և շատ շրջաններում պրոֆմիութենական և մոպրական կազմակերպությունները համատեղ աշխատանք չեն տարել և չեն կատարել ՀԱՄԿԽ-ի և ՄՕՊՐ-ի Կենտկոմի հրահանգները բանվորական մասսաների ինտերնացիոնալ դաստիարակության վերաբերյալ (Բոբրույսկ, Դաղըստան, Արևմտյան մարզ, Կինեշմա, Կրիվոյրոգ, Տվեր, Տուլա): Ինտերնացիոնալ դաստիարակչական աշխատանքի թուլությունը մեկն է այն պատճառներից, որոնք հեշտացնում են դասակարգային թշնամու յե-



լույթները նույնիսկ խոշոր ձեռնարկություններում (Բելեզնյակի, Մագնիտոգորսկ) և արտահայտվում են ազգային փոքրամասնությունների հալածման, շովինիզմի, անտիսեմիտիզմի և նման այլ փաստերով:

4. Գտնելով, որ ՄՕՊՐ-ն ինտերնացիոնալ-դաստիարակչական աշխատանքի թերագնահատումը պրոֆշարժման մեջ գտնված աջ օպորտունիստների կողմից բխում են նրանց ընդհանուր քաղաքական գծի քայքայումից, և որ մի շարք կազմակերպություններում մինչև այժմ էլ նկատվում է մոպրական աշխատանքի թերագնահատումը, ՀԱՄԿԽ-ի նախագահությունը առաջարկում է վերից վար ամենավճռական պայքար մղել գործնականում այդ խնդրում արտահայտվող ամեն տեսակի աջ օպորտունիստական դրսևորումների դեմ, և պրոֆմիութենական ու մոպրական կազմակերպությունների համատեղ աշխատանքի հիմքում դնել հետևյալը.

ա) Գործարկոմները բանվորների և ծառայողների մեջ տարվելիք մոպրական աշխատանքը պետք է մտցնեն ձեռնարկի մասսայական կուլտուրական աշխատանքի միասնական պլանի մեջ, ըստ վորում ինտերնացիոնալ դաստիարակությունը պետք է խոշոր տեղ տալ վողջ ատրյա աշխատանքներում: Ինտերնացիոնալ դաստիարակության աշխատանքը գործարանային պրոֆեսիոնալ և մոպրական կազմակերպությունները պետք է տանեն միացյալ ուժերով (զանազան խմբակների, դասընթացների և ինտերնացիոնալ յերեկույթների կազմակերպում, գրագրություններ կապիտալիստական յերկրների յենթաշեֆ բանտերի բանտարկյալների հետ և այլն):

բ) ՄՕՊՐ-ն իր աշխատանքը պետք է առաջին հերթին ծավալի նոր յեկած բանվորական կադրերի և սեզոնային բանվորների մեջ, ինտերնացիոնալ - դաստիարակչական աշխատանքի միջոցով նրանց պատրաստելով «կոմունիզմի դպրոցը»—պրոֆմիությունները մտնելու համար: ՄՕՊՐ-ի ինտերնացիոնալ աշխատանքը պետք է տարվի դասակարգային պայքարի կոնկրետ փաստերի, կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգի

և դյուրացվության զրկության, այնտեղ գործազրկության աճման և աշխատավորական մասսաների աղքատացման հետ բանվորական մասսաներին ծանոթացնելու հիման վրա: Կապիտալիստական յերկրների արդյունաբերական և ագրարային ճգնաժամերին պետք է հակադրել սոցիալիստական արդյունաբերության աճումը, գործազրկության վերացումը, համատարած կոլեկտիվացման ծավալումը և այդ հիման վրա կուլակության՝ վորպես դասակարգի վերացումը: Առանձնապես ուշադրություն պետք է դարձնել նոր բանվորական կադրերի մեջ նկատված հետամնաց տրամադրությունների և դասակարգային թշնամու յելույթների (շովինիզմի, անտիսեմիտիզմի և այլն) դեմ տարվող պայքարին:

գ) Բանվոր դասակարգի՝ արտադրական բանակի շարքերն անցնող հարյուր հազարավոր կանանց ու յերիտասարդների ներգրավման գործը պահանջում է մասսայական և պրոֆմիութենական կազմակերպություններից ամեն կերպ ուժեղացնելու ինտերնացիոնալ-դաստիարակչական աշխատանքն այդ նոր մասսաների մեջ:

դ) Առաջարկվում է բոլոր պրոֆմիութենական ու կոմիտեներին և կարմիր անկյուններին իրենց գրադարանների համար ձեռք բերել մոպրական գրականություն, կազմակերպելով ՄՈԳՐ-ի հրատարակությունների և ինտերնացիոնալ դաստիարակության վերաբերյալ փոքր գրականության հատուկ ցուցահանդեսներ:

ե) Պրոֆմիութենական կենտրոնական և տեղական մամուլը, ցեխային և գործարանային պատի թերթերն ու բազմատիրաժները պետք է սիստեմատիկ կերպով լուսաբանեն պրոֆմիութենական մարմինների և ՄՈԳՐ-ի ինտերնացիոնալ աշխատանքը:

5. Մեծ նշանակություն տալով տարբերկրյա բանվորների և մասնագետների մեջ տարվող մոպրական աշխատանքներին, առաջարկել Ուկրաինայի, Լենինգրադի, Ուրալի, Պենզայի, Նիժեգորոդսկու, Ստալինգրադի, Նիժնեվոլժսկի և Արևմտյան Սիբիրի պրոֆխորհուրդներին բոլոր խոշոր ձեռնարկություններում և շինարարություններում պրոֆկազմակերպությունների



և մոպրական կազմակերպությունների միացյալ ուժերով աշխատանք կատարել տարբերկրյա բանվորների և մասնագետների մեջ, այդ նպատակի համար կազմակերպելով ռուսերեն լեզվի խմբակներ, ընթացիկ քաղաքականություն ուսումնասիրող խմբակներ, ինչպես նաև հատուկ դասընթացներ՝ տարբերկրյա բանվորներից մոպրական ակտիվ պատրաստելու համար:

6. Առաջարկել բոլոր պրոֆխորհուրդներին և գործարկոմներին ռեալ օգնություն ցույց տալ մոպրական կազմակերպություններին՝ խոշոր ձեռնարկների, շինարարությունների, խորհտնտեսությունների և Մ. Տ. Կ.-ների մոպրական բջիջներն ամրացնելու գործում, աշխատելով առավելագույն չափով ավելացնելու բանվոր-բանվորուհիների նոր կադրերից կազմված մոպրական խմբակների թիվը, ինչպես նաև նրանց ակտիվ մասնակից դարձնելու մոպրական աշխատանքներին:

7. Սույն վորոշման կիրառման պատասխանատվությունը դնելով պրոֆմիությունների կենտրոնական կոմիտեների և պրոֆխորհուրդների վրա, ՀԱՄԿԽ-ի նախագահությունն ընդգծում է, վոր ձեռնարկությունների գործարկոմներն առանձնապես պատասխանատու յեն այս աշխատանքների համար:

Մասսայական աշխատանքների ռեկորդը պետք է կազմակերպվի սույն վորոշման կատարման ստուգումը և յերեք ամսից հետո դեկուցվի ՀԱՄԿԽ-ի նախագահությանը:

## ՄԱՐՏԱԿԱՆՈՐԵՆ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՅԻ ՅԵՆԹԱՐԿԵՆՔ ՄԵՐ ՈՒԺԵՐԸ

ՀԱՄԿԽ-ի քարտուղար ընկ. ԱՆՑԵԼՈՎԻՉԻ ճառը ՄՈԳՐ-ի 3-րդ համամիութենական համագումարում

ԸՆԿԵՐՆԵՐ.

ՀԱՄԿԽ-ի հանձնարարությամբ թույլ տվեք պրոֆմիությունների բազմամիլիոն բանակի անունից հաղորդել ջերմագին վողջույն ԽՍՀՄ-ի մոպրական կազմակերպությունների համագումարին և բոլոր մոպրականներին:

ԽՍՀՄ-ի կամավոր հասարակական կազմակերպությունների մեջ ՄՕՊՐ-ը հանդիսանում է մասսայական կազմակերպություններից մեկը: Նրա մեջ զգացվում է հասարակական կյանքի զարկերակի բաբախումը, նրա մեջ զարգանում են մասսաների ակտիվությունն ու ինքնագործունեությունը:

Այս փաստի հետ միասին չի կարելի չհիշել, վոր մենք դեռ լրիվ չենք օգտագործել մեր յերկրում յեղած բոլոր հնարավորությունները ՄՕՊՐ-ն էլ ավելի ամրացնելու, նրա շարքերը լայնացնելու և ձեռնարկությունների ու հիմնարկությունների մասսաների մեջ սովետական մոպրական աշխատանքի վորակը բարձրացնելու համար: Մեր բոլորի, այդ թվում նաև պրոֆմիությունների հանցանքն է, վոր այդ հնարավորությունները լրիվ և անհրաժեշտ չափով չեն օգտագործվել: Սկսած գործարանային կոմիտեներից և ՄՕՊՐ-ի ստորին բջիջներից մինչև ՄՕՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեն ու ՀԱՄԿԽ-ը, դեռևս չի արված այն բոլորը, վոր ՄՕՊՐ-ը ԽՍՀՄ-ում ծավալի իր աշխատանքներն այնպես, ինչպես այդ պահանջում է միջազգային պրոլետարական շարժումը:

Յես իմ ճառն սկսեցի այդ թերությունների մատնանշումից վոչ թե նրա համար, վոր ցանկանում եյի սոսկ հիշատակել այդ մասին համագումարում, այլ նրա համար, վոր մենք պրոֆակտիվը, արհմիության բոլոր անդամները, ՄՕՊՐ-ի ակտիվը և անդամները, մարտականորեն մոբիլիզացիայի յենթարկենք մեր ուժերը հեղափոխական մարտիկների գործին օգնելու համար: Սակայն, դրա համար ամենից առաջ պետք է ձգտել, վոր արհմիության անդամները գիտենան ու ըմբռնեն ՄՕՊՐ-ի խնդիրները և հասկանան, թե ինչ նշանակություն ունի այդ կազմակերպությունը պրոլետարական գործի համար:

## ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ԹԵՎԱԿՈԽՈՒՄ Է ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԴԵՄ ՄՂՎԵԼԻՔ ԽՈՇՈՐ ՄԱՐՏԵՐԻ ՇՐՋԱՆԸ

Գերմանիայի, Լեհաստանի և այլ կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգը թեվակոխել է և



թևակոխում է կապիտալի և սոցիալֆաշիզմի դեմ, կոմունիստական բանվորական շարժման բոլոր թշնամիների դեմ տարվելիք խոշոր մարտերի շրջանը: Գաղութային և կիսագաղութային յերկրներում ծավալվում է հեղափոխական շարժումն ընդդեմ իմպերիալիզմի և նրան ծառայող ազգային բուրժուազիայի:

Հնդկաստանի և Չինաստանի հեղափոխության հրդեհի բոցն ապացուցում է, վոր բուրժուազիայի, կալվածատերերի և իմպերիալիստների վոչ մի տեռոր չի կասեցնի այն շարժումը, վորն սկսել են հարյուր միլիոնավորները ստրկության շղթաներից և հալածանքներից ազատագրվելու համար:

Միջազգային կացությունը ներկայումս բնորոշվում է, մի կողմից՝ խոր արդյունաբերական և ագրարային ճգնաժամով, իսկ մյուս կողմից՝ իմպերիալիստների անդուլ պատրաստությամբ ԽՍՀՄ-ի վրա հարձակում գործելու համար: Տնտեսական ճգնաժամը մի շարք յերկրներում արդեն վերածվում է քաղաքական ճգնաժամի, և այդ յերկրների բանվոր դասակարգը կոմկուսակցության ղեկավարությամբ դուրս է գալիս վիթխարի կռվի՝ տալով բազմաթիվ զոհեր: Տասնյակ հազարավոր առաջավոր բանվորներ և բանվորուհիներ հեծում են կապիտալիստական բանտերում, բազմահազար պրոլետարական ընտանիքներ վորբանում են, կորցնելով այդ պայքարում իրենց հայրերին, մայրերին, յեղբայրներին և քույրերին:

Հաշվի առնելով պրոլետարական բոլոր հեղափոխությունների և հատկապես Հոկտեմբերյան հեղափոխության դասերը՝ բուրժուազիան համախմբում է իր ուժերը ֆաշիզմի ռազմաճակատներում, վորպեսզի ֆաշիզմի և բոլոր յերկրների՝ 2-րդ Ինտերնացիոնալի կողմից գլխավորող մենշևիկների օգնությամբ՝ տապալի իրենց ատելի պրոլետարական դիկտատուրան ԽՍՀՄ-ում և մահացու հարված հասցնի բանվոր դասակարգի այն ջոկատներին, վորոնք կհանդգնեն ապստամբել կապիտալիստական յերկրների վարձու աշխատանքի և ստրկության կապերի դեմ:

Այդ իսկ պատճառով, նրանք՝ Հռոմի պապի գլխավորությամբ կազմակերպեցին «խաչակրաց արշավանք» ԽՍՀՄ-ի դեմ: Հենց այդ պատճառով, նրանք խնկարկում են «հարկադիր աշխատանքի» զրպարտության ուրվականը և այնքան շատ բղավում այսպես ասած խորհրդային «դեմպինգի» մասին:

Ընկերներ, յեթե այս պայմաններում կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգի առաջավոր ջոկատների առաջ ամենապատասխանատու խնդիր է դրված մոբիլիզացիայի յենթարկել հասարակական պրոլետարական կարծիքը հակահարված հասցնելու համար բոլոր նրանց, ովքեր զրպարտում են աշխարհի առաջին սոցիալիզմ կառուցող պետությունը և ինտերվենցիա յեն պատրաստում նրա դեմ, ապա Խորհրդային Միության կազմակերպված պրոլետարիատի առաջ ծառանում է վոչ պակաս պատասխանատու խնդիր՝ պայքարել սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցման, հնգամյակը չորս տարում իրագործելու և դրա հետ միասին ՄՈՊՐ-ի միջոցով միջազգային հեղափոխության մարտիկներին ոգնություն հասցնելու գործը լայն կերպով ծավալելու համար:

Բայց, ընկերներ, վորպեսզի մենք չսահմանափակվենք միայն գեղեցիկ ճառերով և բանաձևերով, ամենից առաջ պետք է բարձր աստիճանի վրա դնենք արհմիության բոլոր անդամներին ինտերնացիոնալ դաստիարակություն տալու վողջ աշխատանքը:

## ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

ԽՍՀՄ-ի բանվորական մասսաները, նույնիսկ բանվոր դասակարգի ամենահետամնաց խավերն իրենց դասակարգային բնազդով զգում ու հասկանում են, թե ինչ նշանակություն ունի վոչ թե խոսքով, այլ գործով միջազգային համերաշխությունն արտահայտելը:

Խորհրդային յերկիրն այցելած արտասահմանյան բանվորության բազմաթիվ պատգամավորությունները այդ տեսնում են խորհրդային բանվորների ամեն մի ժողովում: Ուր էլ վոր նրանք յեղել են, նույնիսկ ամե-



նահետամնաց, դեռևս վոչ բավարար չափով քաղաքականապես զարգացած բանվորական շերտերի մոտ — անգրագետների մոտ, վորոնք նոր են յեկել գյուղից, ամենուրեք ոտարերկրյա բանվորները տեսել են մեր բանվորների բացառիկ հետաքրքրությունը դեպի կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգի դրությունն ու նրա պայքարը:

Խոսելով բանվոր դասակարգի հետամնաց խավերի մասին, տեղին է այդ բացատրել դասակարգային բնազդով, վորը ավելի առաջ է, քան այդ մասսաների քաղաքական պատրաստականությունը, կամ ավելի ճիշտ արտահայտելով՝ պատճառ է դառնում, վոր ամենաանգրագետ բանվորն արագ ըմբռնի միջազգային քաղաքականությունը, սկսի զգալ, վոր ինքը մի մասնիկն է միջազգային բանվորական շարժման, յեթե, ինարկե, գործարանային կոմիտեն, կուսակցական, կոմյերիտական ու ՄՈՊՐ-ի բջիջներն էլ իրենց հերթին ոգնում են նրան այդ հասկանալու խնդրում:

Ընկերներ, միջազգային համերաշխության գործը մենք չենք կարող և չպետք է կառուցենք միայն բնազդի վրա: Անհրաժեշտ է, վորպեսզի պրոլետարական համերաշխության բնազդը, վորը յուրահատուկ է ամենահետամնաց բանվորներին, լրացվի նրանով, վոր յուրաքանչյուր բանվոր խորապես ըմբռնի այն միջազգային իրադրությունը, վորում ապրում են ԽՍՀՄ-ի և կապիտալիստական յերկրների բանվորները և պայքարում սոցիալիզմի համար: Պետք է, վոր ամեն մի բանվոր գործարանում, հանքում, խորհտնտեսությունում, կամ մեքենատրակտորային կայանում, ուր էլ վոր նա աշխատելիս լինի, կարողանա ըմբռնել այդ իրադրությունը և ճիշտ գնահատական տալ այս կամ այն կապիտալիստական յերկրում տեղի ունեցող բոլոր դեպքերին:

Բայց այդ բոլորին հասնելու համար անհրաժեշտ է, վոր ՄՈՊՐ-ի և արհմիութենական կազմակերպությունները համառ աշխատանք տանեն լայնացնելու իրենց անդամների ինտերնացիոնալ աշխարհահայացքը մանավանդ [illegible], վորոնք դեռ նոր են մտել արտա-

դրության մեջ աշխատելու և դեռ չեն յեփվել սոցիալիստական գործարանի արտադրական կաթսայում:

Եթե մեզ հաջողվի այդ աշխատանքը բանվորական մասսայի մեջ տանել այնպես՝ ինչպես հարկն է, մանավանդ սեզոնայինների մեջ, յեթե հաջողվի, —իսկ մեզ անպայման պետք է այդ հաջողվի, —իր ամբողջ մեծությամբ ծավալել այդ մասսաների մեջ ինտերնացիոնալ դաստիարակությունը, ապա մենք կապահովենք լենինյան մարտական ինտերնացիոնալիզմի իդեաների արմատացումը քաղաքի, շրջանի, միջակ և կոլտնտեսական լայն մասսաների մեջ:

Իսկ ինչ վիճակի մեջ է գտնվում մասսայական ինտերնացիոնալ աշխատանքը: Պետք է ուղղակի ասել, վոր մեր աշխատանքի այդ ասպարեզում դեռ ամեն ինչ լավ վիճակում չէ, այդ ասպարեզում քիչ չեն ճեղքվածքները: Անգամ պրոֆ-անդամների վորոշ մասում, էլ չեմ խոսում անկազմակերպ մասսայի մասին, մինչև այժմ դեռևս արմատախիլ չեն արված այն տրամադրությունները, վորոնք համատեղելի չեն կարող լինել վոչ միության կանոնադրության և վոչ էլ խորհրդային պրոֆմիությունների աշխատանքի բովանդակության ու վոգու հետ:

Դուք գիտեք, ընկերնե՛ր, վոր առանձին ձեռնարկություններում տեղի յեն ունեցել գործարանները խցկված և բանվոր դասակարգին սոցիալապես անհարազատ տարրերի յելույթներ, վորոնք արտահայտվել են անտիսեմիտիզմով և ուրիշ ազգությունների բանվորների ու բանվորուհիների հալածանքով, և այդ յելույթներն յերբեմն պաշտպանություն են գտել բանվորների ու բանվորուհիների հետամնաց շերտերի կողմից: Նման փաստեր տեղի յեն ունեցել Մինսկում, Ադրբեջանում և նույնիսկ Մոսկվայում ու Լենինգրադում:

Բոլոր այս փաստերը գալիս են ասելու, թե վորքան թույլ է մեզ մոտ մասսայական աշխատանքն ինտերնացիոնալ դաստիարակության ասպարեզում և վորքան շատ բան պետք է անել, վորպեսզի զանազան ազգության պատկանող բանվոր-բանվորուհիները, վո-



րոնք աշխատում են գործարաններում, ֆաբրիկաներում և շինարարություններում, զգան իրենց վորպես պրոլետարական միասնական ընտանիքի անդամներ: Մեզնում դեռևս առանձնակի դեպք չի, յերբ գործարաններում, ֆաբրիկաներում, առանձնապես նոր շինարարություններում, ինչպես նաև խորհտնտեսություններում ռուս, թուրք, կազակ, թաթար և տարբերկրացի բանվորներն ապրում են առանձին-առանձին կոլեկտիվներով, բառ վորում, ինչպես քիչ առաջ շեշտեցի, տեղի յեն ունենում նույնիսկ ազգային փոքրամասնությունների բանվորներին հալածելու դեպքեր:

Նույն ընդհանուր գործը կատարող և նույն դասակարգային շահերն ունեցող բանվոր-բանվորուհիների այս անջատականությանը կարելի յե կարճ ժամանակում վերջ տալ միայն այն դեպքում, յերբ մենք թե արտադրության մեջ և թե կենցաղում համառ մասսայական աշխատանք կծավալենք նրանց ինտերնացիոնալ դաստիարակության ուղղությամբ:

Խորհրդային պրոֆմիությունները, ինչպես գիտեք, խիստ միջոցներ ձեռք առան այն դեպքի առթիվ, յերբ Ստալինգրադի տրակտորային գործարանում աշխատող ամերիկացի բանվորներից մեկը նույնիսկ վիրավորանք ցույց տվեց մի նեգր բանվորի հանդեպ, վորովհետև տարածված է «դեմոկրատական» Ամերիկայում: «Դեմոկրատական» Ամերիկայում սպիտակների կողմից նեգրերին ծեծելը կենցաղային յերևույթ է: Այդ կշարունակվի մինչև այն ժամանակ, յերբ սպիտակ և սև բանվորները վերջ կտան կապիտալիստական կարգերին, վորոնք թշնամանք են հրահրում զանազան ցեղի պատկանող բանվորների մեջ, վորպեսզի կարելի լինի նրանց ավելի հեշտ կերպով պահել կապիտալի յերկաթյա լծի տակ:

Բայց, ի մեծ ամոթանք մեր, պետք է ասել, վոր մեզ մոտ առանձին գործարաններում, շինարարություններում և խորհտնտեսություններում յեղել են առանձին դեպքեր, յերբ ծեծել են զանազան ազգությունների պատկանող բանվորների, որինակ՝ կազակների, թուր-

քերի, Հրեաների և այլն: Ինչքան էլ վոր սակավ են այդպիսի դեպքերը, այնուամենայնիվ նրանք մեզ չա-րան են տալիս:

Պարզ է, վոր վորևէ բուրժուական գրչակ կառչավի ՀԱՄԿԿ-ի քարտուղարի հայտարարությունից և կգրի թե «տեսեք, Ս. Միության մեջ Թուրք, Հրեա և այլ բանվորների մասսայական ծեծի դեպքեր են տեղի ունենում»: Հենց այդ պատճառով էլ նրանք բուրժուական գրչակներ են և նրանց առատ կերպով վարձատրում ու պարգևատրում են ԽՍՀՄ-ի դեմ սուտեր գրելու համար:

Մենք բոլորս հասկանում ենք, վոր նրանց կողմից ատեր ստեղծելը, ինչպես և անտիսեմիտիզմը, մեծապետական շովինիզմը և տեղական նացիոնալիզմը, այդ բոլոր դասակարգային պայքարի դրսևորումներ են: Մեր յերկրի ինդուստրացումը, համատարած կոլեկտիվացումը և այդ հիման վրա կուլակության՝ վորպես դասակարգի՝ վերացումը մահացու հարված է այն ամենին, վորը խանգարում է նոր մարդու և նոր կյանքի կառուցման գործին:

Յես կանգ առա այս բացառական փաստերի վրա միայն այն նպատակով, վորպեսզի ընդգծեմ, թե ինչ նշանակություն ունեն մասսայական ինտերնացիոնալ դաստիարակությունը և ՄՕՊՐ-ի աշխատանքը գործարաններում, շինարարություններում, խորհտնտեսություններում և կոլտնտեսություններում:

Մեր պայմաններում կան բոլոր անհրաժեշտ նախադրյալները, վորպեսզի վերացնենք մանր բուրժուական տարրերի ազդեցությունները բանվոր դասակարգի հետամնաց խավերում, արմատախիլ անենք կուլակի կողմից բանվորներին ներշնչված ատելությունը դեպի այլ ազգի բանվորները, դաստիարակենք մասսաներին ինտերնացիոնալիզմի իսկական վոգով և այդպիսով ստեղծել մի դրություն, վոր ամեն մի պրոլետար վերաբերվի մյուս պրոլետարին այնպես, ինչպես միասնական պրոլետարական ընտանիքի անդամի:

Բայց դրա համար ինտերնացիոնալ դաստիարակ-



չական աշխատանքների մեջ ինքնահոսը պետք է փոխարինել համառ սիստեմատիկ աշխատանքով, ըստ վորում այդ աշխատանքին պարտավոր է մասնակցել յուրաքանչյուր կոմունիստ, կոմյերիտական, յուրաքանչյուր առաջավոր անկուսակցական բանվոր, յուրաքանչյուր պրոֆմիության անդամ:

Բոլոր գործարանային կոմիտեների և միությենական մարմինների վրա պարտականություն է դրվում ապահովելու այդ աշխատանքի ղեկավարությունը ձեռնարկություններում և ՄՕՊՐ-ին լայն աջակցություն ցույց տալու այդ աշխատանքներում:

## ՎՈՉ ԹԵ ԲԱՐԵՍՐՏՈՒԹՅՈՒՆ, ԱՅԼ ՊԱՅՔԱՐ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ

Ընկերներ, ինչն էր պատճառը, վոր պրոֆմիությունների հին ոպորտունիստական ղեկավարությունը թերագնահատում էր ՄՕՊՐ-ի աշխատանքները: Խնդիրը, հասկանալի յե կայանում եր վոչ թե նրանում, վոր կազմակերպությունների ղեկավարները չեյին կարողանում ընդհանուր լեզու գտնել, վոչ թե նրանում, վոր վատ փոխհարաբերություններ տեղի ունեյին մի վորևէ Պետր Իվանովիչի և Իվան Պետրովիչի միջև: Այդ թերագնահատումը բխում եր այն բանից, վոր սխալ եյին գնահատվում այն պրոցեսները, վորոնք տեղի յին ունենում բանվոր դասակարգի մեջ, համաշխարհային բանվորական շարժման մեջ, թերագնահատվում եր միությունների կողմից մասսաների մեջ տարվելիք ինտերնացիոնալ դաստիարակչական աշխատանքի նշանակությունը:

Յերբ բանվորը և բանվորուհին կամավոր կերպով մտնում են մոպրական կազմակերպությունների շարքերը,—իսկ միայն այդ կերպ անդամագրվելն է ընդունելի, ապա նրանք անդամագրվում են վոչ թե վորպես գթության քույրեր կամ յեղբայրներ, այլ վորպես բանվոր դասակարգի գործի համար պայքարողներ:

Բանվորները և ծառայողները մտնում են ինտերնացիոնալ կազմակերպության մեջ նրա համար, վորպեսզի

նրա միջոցով մասնակցեն միջազգային պրոլետարական հեղափոխության նախապատրաստման, պայքարին և հաղթանակին: Նրանք մտնում են այդ կազմակերպության մեջ նրա համար, վորպեսզի իրենց հասարակական աշխատանքով և հասարակական գումարներով, հասարակական ակտիվության բոլոր ձևերով մոտեցնեն կապիտալիզմի վրա բանվոր դասակարգի վերջնական գրոհի որը և ժամը:

Ընկերնե՛ր, մեր սոցշինարարությունը հանդիսանում է միջազգային հեղափոխական բանվորական շարժման մի օղակը: Յերբ մենք ուրախանում ենք այդ շինարարության ամեն մի խոշոր հաջողության համար, յերբ մենք խոսում ենք այն մասին, վոր չնայած կուլակների և վնասարարների ամեն մի դավադրության, չնայած աջերի և «ձախ» ոպորտունիստների բոլոր դավադրություններին, հեղափոխական շոգեշարժը վստահ շարժվում է դեպի առաջ, յերբ մենք խոսում ենք այն մասին վոր 1931 թվին, 5-ամյակի 3-րդ վճռական տարում մենք ավարտում ենք ԽՍՀՄ-ի սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումը,—այդ մենք ուրախանում ենք վոչ թե ինչ վոր ինքն իր մեջ ամփոփված յերկրի հաջողությունների համար, այլ պարծենում ենք համաշխարհային պրոլետարիատի սոցիալիստական հայրենիքի հաջողություններով: Մեր հաջողությունները պրոլետարական դիկտատուրայի յերկրի համաշխարհային հեղափոխության ամբողջ հաջողություններն են:

Ահա թե ինչու նա, ով ցանկանում է լինել մոպրական կազմակերպության գիտակից ակտիվ անդամ և պրոֆմիության գիտակից ակտիվ անդամ, պետք է լինի սոցիալիզմի ակտիվ կառուցող: Այսպիսով՝ պայքարելով միջազգային հեղափոխության գործի համար, հավաքելով նյութական միջոցներ մոպրական կազմակերպությունների համար, աշխատելով կապիտալիստական յերկրների բանտարկյալների հետ կապ պահպանելու ուղղությամբ, ամրացնելով կապը ոտարյերկրյա բանվորների հետ, նրանք համախմբում են միջազգային հեղափոխական բանվորական շարժման ուժերը, շարժում,



վորը զարգանում է և կարող է հաղթել միայն մի դրոշի տակ—Կոմինտերնի և Պրոֆինտերնի դրոշի տակ:

Ընկերներ, պրոֆմիությունների թերությունները ինտերնացիոնալ աշխատանքների բնագավառում, նույն թվում և ՄՈՊՐ-ի աշխատանքների բնագավառում, խորհրդային պրոֆմիությունները չեն գիտում վորոշ տեխնիկական թերություններ: ՀԱՄԿԽ-ի նախագահությունը գիտում է այդ թերությունները քաղաքական տեսակետից: Այն պրոֆմիությունը, գործարկոմը, բանկոմը, տեղկոմը, վորն ունի ճեղքվածք մոպրական աշխատանքներում, կնշանակի նա կաղում է իր անդամների ինտերնացիոնալ դաստիարակության աշխատանքներում, և այդպիսով հայտաբերում է պրակտիկայում աջ ոպորտունիստական թերագնահատում հանդեպ այդ աշխատանքների:

Մենք չենք կարող և չպետք է այդ թերությունները բացատրենք միայն մեր ակտիվիստների քաղաքական կիսագրագիտությամբ, ծանրաբեռնվածությամբ և այլն, քանի վոր այդ թերությունների արմատները թաղված են ինտերնացիոնալ աշխատանքի նկատմամբ ակտիվի վորոշ մասում գոյություն ունեցող քաղքենիական մոտեցման մեջ: Յեթե կուզեք, այդ հանդիսանում է շատ դեպքերում ազգային սահմանափակվածության արտահայտություն, իսկ ազգային սահմանափակվածությունը հանդիսանում է աջ ոպորտունիզմի ցայտուն արտահայտություններից մեկը:

Ահա թե ինչու ՀԱՄԿԽ-ն կանի այն ամենը, ինչ իրենից կախված է, վորպեսզի առանձին կազմակերպությունների կոնկրետ օրինակների և փաստերի հիման վրա հանգի քաղաքական և կազմակերպչական յեզրակացությունների:

Բայց, ընկե՛րներ, մենք և դուք պետք է հասկանանք, վոր այդ քաղքենիության, պասսիվության, ինտերնացիոնալ դաստիարակության կենդանի մասսայական աշխատանքի թերագնահատման ելեմենտները գոյություն ուն[illegible] պրոֆմիութենական

1004
2983
ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

կազմակերպություններում, այլ գոյություն ունեն նաև մոպրական կազմակերպություններում:

ՄՈՊՐ-ը դարձել է հզոր կազմակերպություն, այնպիսի մասսայական մի կազմակերպություն, որի մասին կարելի չէ խոսել, որպես մասսայական կամավոր կազմակերպություն, չվախենալով հակասած լինել իրականությանը: Ես խոսում եմ այդ մասին նրա համար, որ ունենք կազմակերպություններ, որոնք ունեն կամավոր ընկերության կանոնադրություն, ընդգրկում են թղթի վրա անդամ տասնյակ հազար ու ավելի անդամներ, բայց այդ կազմակերպություններում դուք չեք տեսնի ոչ շարքային անդամների ակտիվությունը, ոչ էլ ակտիվի ղեկավարություն: Ես կարծում եմ, որ չեմ չափազանցնի, եթե ասեմ, որ ՄՈՊՐ-ից բացի, ակտիվ կազմակերպություն է հանդիսանում նաև մեր Պաշը-Ավիաքիմը: Եթե այդպիսի ցերկու կազմակերպություն, ինչպես ՄՈՊՐ-ը և Պաշը-Ավիաքիմը, մի քանի անգամ լավացնեն իրենց աշխատանքները, եթե պրոֆմիությունները, որոնք ընդգրկում են 13 միլիոնանոց աշխատանքի բանակ, ցույց տան նրանց իրենց օգնությունը, ապա մենք կարող ենք ձեռք բերել խոշոր նվաճումներ մասսաների ինտերնացիոնալ և սոցիալիստական մարտական դաստիարակության գործում, կարող ենք առաջ շարժել ԽՍՀՄ-ի պաշտպանության գործը, ծավալել պրոլետարիատի նախապատրաստությունը վերջին և վճռական կռվի համար:

## ԼԻՆԵԼ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Ընկերներ, ես ուզում եմ բերել մի քանի թվեր, որոնք խիստ պերճախոս են: Գուցե ես [illegible], բայց թռուցիկ կերպով ծանոթանալով այն թվերի և նյութերի հետ, որոնք բաժանված են համագումարի անդամներին, իսկույն աչքի է ընկնում հետևյալը, որ մոպրական կազմակերպությունները ընդգրկում են մոտ 5 միլիոն անդամ, որոնցից մոտավորապես կես միլիոնը կարելի է չհաշվել, քանի որ, հասկանալի է, կան և «մեռած հոգիներ»: Յուրաքանչյուր մեծ ու մասսայա-



կան կազմակերպություն ունի «մեռած հոգիներ» և այդ պետք է հաշվի առնել: Այդ 5 միլիոնի մեջ բանվոր և ծառայողներ կան 2-2½ միլիոնից ոչ ավելի: Բայց չէ՞ որ պրոֆմիություններն ընդգրկում են 12 միլիոնից ավելի...

Ձայներ—Թույլ չավեք միլիոններին ես ընդգրկել:

Մենք թույլ չավլինք կազմակերպել կամ դուք եք վատ կազմակերպում, բայց փաստը մնում է փաստ: Շատ դեպքերում երևում է և մեկը և մյուսը: Թեպլիկան ցերեվի վերաբերում է ՀԱՄԿԽ-ի այն որոշման, որն արգելում է ծանրաբեռնել բանվորի և ծառայողի բյուջեն՝ նրանց շատ կազմակերպությունների անդամագրելով (ավելի քան 2-ից): Ես մոռացված չեմ ՀԱՄԿԽ-ի նախագահության կողմից որևէ նոր մեկնաբանում տալու այդ որոշման առթիվ, բայց ինձ թվում է, որ ՄՈՊՐ-ը կարելի է առանձնացնել մյուս կազմակերպություններից և պետք է առանձնացնել (ծափահարություններ): Ես կրկին զգուշացնում եմ, որ արտահայտում եմ իմ անձնական կարծիքը և խոսում եմ ոչ որպես ՀԱՄԿԽ-ի քարտուղար: Այդ ինձ թելադրում են պրոլետարիատի լայն մասսաների մեջ ինտերնացիոնալ աշխատանքի ծավալման շահերը:

Վերափոխելով բանաստեղծի այն խոսքերը, որ ասում են—«բանաստեղծ կարող ես չլինել, սակայն քաղաքացի պարտավոր ես լինել», հարկավոր չէ արդյո՞ք ասել—բանվոր և բանվորուհի, դու կարող ես մի որևէ այլ կամավոր ընկերության անդամ չլինել, սակայն պարտավոր ես ամեն ժամանակ և ամենուրեք պաշտպանել ինտերնացիոնալ համերաշխության և հեղափոխության մարտիկներին օգնելու գործը:

Այս խնդիրը, կրկնում եմ, պահանջում է վերջնական կազմակերպչական մշակում: Համագումարի բոլոր պատգամավորները գիտեն այն պատճառները, որոնք հիմք են ծառայել ՀԱՄԿԽ-ի այն որոշման, որը պահանջում էր չծանրաբեռնել բանվորի բյուջեն՝ նրանց շատ կամավոր ընկերությունների անդամագրելով: Այս

լենինյան մարտական լոզունգներին ու իդեաներին և ամբողջ աշխարհում կոմունիզմի հաղթանակի համար տարվող պայքարին։

Բայց չպետք է մոռանալ, վոր միայն ընդգրկելով ՄՈՊՐ-ի շարքերը, չի կարելի իսկույն և լրիվ դաստիարակել բանվորին և ծառայողին։ Ահա թե ինչու յուրաքանչյուր պրոֆմիութենական ակումբ, յուրաքանչյուր կարմիր անկյուն, յուրաքանչյուր պատի թերթ չպետք է մոռացության տա ՄՈՊՐ-ը։ Մասսաների ինտերնացիոնալ դաստիարակության խնդրում խոշոր հաջողություններ ձեռք բերելու համար հարկավոր է պրոֆմիությունների վողջ աշխատանքը մի քանի անգամ ավելի շատ տոգորել ինտերնացիոնալիզմի վոգով և իդեաներով, քան այդ յեղել է մինչև օրս։ Այդ նշանակում է, վոր արտասահմանյան դասակարգային պայքարի քաղբանտարկյալների և ՄՈՊՐ-ի աշխատանքների մասին պետք է գրի վոչ միայն մոպրական մամուլը, այլև պրոֆմիութենական մամուլը։ Մենք ունենք լայն ծավալված պրոֆմիութենական մամուլ։ Պրոֆմիութենական այդ օրգաններում պետք է շատ ավելի ուշադրություն դարձնել ՄՈՊՐ-ի աշխատանքների մասսայականացման և բանվորական մասսաների ինտերնացիոնալ դաստիարակման խնդիրներին, քան այդ յեղել է մինչև օրս։

Յես կվերջացնեմ նրանով, ինչից սկսեցի։ Մենք պրոֆմիութենական և մոպրական կազմակերպություններս միասին բանվորական մասսաների մեջ աշխատանք ծավալելու տեսակետից ունենք մեծ հնարավորություններ։ Այն տեղը, վոր բռնում են պրոլետարական դիկտատուրայի յերկրում պրոֆմիությունները, այն խնդիրները, վորոնք դրված են մեր առաջ վերակառուցման շրջանում, պարտավորեցնում են պրոֆմիութենական մարմիններին, վորպեսզի նրանք իրենց պատասխանատու զգան մոպրական կազմակերպությունների աշխատանքների ծավալման և ընթացքի մասին։

Թույլ տվեք մեկ անգամ ևս ՀԱՄԿԽ-ի նախագահության հանձնարարությամբ բոլոր պրոֆմիություննե-



րի անունից վողջունել Ձեզ և խորին համոզմունք հայտնել, վոր ընթանալով միասին, ձեռք ձեռքի, մենք միասին կամրապնդենք միջազգային համերաշխության գործը, և ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ը հեղափոխական մարտիկների օգնության գործում կբռնի ամենաամուր, ամենաառաջավոր դիրքերից մեկը։

Մենք, իհարկե, շատ ուրախ կլինենք, յեթե այդ սոցիալիստական մրցման մեջ կապիտալիստական յերկրների յեղբայրական կազմակերպությունները, օրինակ՝ Գերմանիայի, Ֆրանսիայի և այլ յերկրների կազմակերպությունները մեզնից առաջ անցնեն, միայն այն պայմանով, վոր և մեր աշխատանքը մի քանի անգամ ավելի կանոնավոր դրված լինի, քան մինչև այժմ։

Կոմինտերնի ղեկավարությամբ՝ բանվոր դասակարգի ազատագրումը հանդիսանում է բանվոր դասակարգի գործը։ Կապիտալիզմի շղթաներից բանվոր դասակարգի ազատագրումը կարող է տեղի ունենալ միայն հեղափոխական դասակարգային պայքարի հետևանքով, և այն բանի հետևանքով, յերբ մենք կապիտալիստական յերկրների պրոլետարիատի հետ միասին կ՚կատարենք այն, ինչ պարտավորեցնում են մեզ մեր դասակարգային պարտականությունն ու շահերը։

ՀԱՄԿԽ-ի անունից մենք կոչ ենք անում պրոֆմիության բոլոր անդամներին՝ ծանոթանալ ՄՈՊՐ-ի 3-րդ համաժողովի արդյունքների հետ և վոչ մի հնարավոր միջոցի առաջ կանգ չառնել, խոսքը գործին համապատասխան դարձնելու, մոպրական կազմակերպությունների պրոֆմիութենական աջակցությունն ապահովելու համար։

Կեցցե կոմունիստական կուսակցությունը, Լենինյան Կենտկոմը, և բանվոր դասակարգի ու կոմկուսակցության առաջնորդ ընկ. Ստալինը (բուռն ծափահարություններ)։

Կեցցե ԽՍՀՄ աշխատավորական մասսաների ակտիվությունն ու ինքնագործունեությունը Կոմինտերնի և

2320

*Պրոֆինտերնի դրոշի տակ. (բուռն ծափահարություններ, բացականչություններ «ուռա»; բոլոր վոտքի յեն կանգնում)։*

*Կեցցեն ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի անդամները (ծափահարություններ, բացականչություններ «ուռա», «ուռա», «ուռա»)։*

*Կեցցե՛ ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի նորընտիր Կենտկոմը։*
*(Յերկարատև ծափահարություններ)։*

ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



ՀՀ Ազգային գրադարան
NL0227267

ԳԻՆԸ 10 ԿՈՊ. ($^{2}/_{3}$ մ.)

43. 467

Анцелович

**МОПР и ПРОФСОЮЗЫ**

Госиздат ССР Армении
Эривань—1932